

ԲԱՆԱԿԵՃԵՐ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ
ДИСКУССИИ И ОБСУЖДЕНИЯ

ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՅԻ ԽՈՆԱՐՀՄԱՆ ՁԵՎԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

Հ. Ա. ԳԼՄԻՆԳՈՒԼՅԱՆ

Ստոր լեզունների ուսուցման պրակտիկան արդի պայմաններում մի շարք շարքեր է դնում այդ լեզուները հետապոտողի առաջ՝ կապված երկու լեզուների (մայրենի և օտար) իրողությունների զուգադրական ուսումնասիրության հետ:

Բացի օտար լեզուների դասավանդման մեթոդիկայի կատարելագործման պրակտիկ խնդիրներից, որ իր առաջ դնում է ուսումնասիրողը, երկու լեզուների (ինչպես ազգակից, այնպես էլ ոչ ազգակից) փաստերի զուգադրական հետազոտությունն ունի նաև մեծ տեսական նշանակություն, որովհետև առանձնարավորություն է տալիս կոնկրետ լեզվական նյութի տեսումնասիրության համար՝ իման վրա ամենիս ընդհանուր բնույթի որոշ եզրակացություններ՝ զուգադրով լեզուներից յուրաքանչյուրի սպեցիֆիկայի և կառուցվածքային առանձնահատկությունների վերաբերյալ:

Լենգլերենի և հայերենի փաստերի զուգադրական ուսումնասիրության կապակցությամբ անհրաժեշտություն է առաջանում վերանայելու և ճշտելու ոչ միայն անգլերենի, այլև հայերենի քերականության առանձին հարցեր:

Հայերենի քերականության ճշտման կարիք ունեցող այդպիսի հարցերի թվին է պատկանում, մեր կարծիքով, հայերենի բայի խոնարհման ձևերի համակարգի, մասնավորապես արդի գրական հայերենի բայի ժամանակային ձևերի թվի ու կազմի հարցը:

Տարբեր հայագետների մոտ արդի դրական հայերենի բայի ժամանակա-
յին ձևերի թիվը տատանվում է երեքից (ներկա, անցյալ, ապառնի) մինչև
հիսունութ, ըստ որում ուսումնասիրողներից ոմանք բայի համապատասխան
ձևերը տարբերակում են ժամանակային սլանով, իսկ մյուսները մի շարք
ձևերի մեջ տեսնում են կերպի տարբերություններ (վաղակատար, հարակա-
տար, անկատար, կատարյալ)։

Հնարավորություն չունենալով տվյալ հոդվածում հանգամանորեն կանգ առնելու հարցի պատմության վրա, փորձենք համառոտակի բնութագրել տվյալ հարցի վերաբերյալ եղած հիմնական տեսակետները:

Պրոֆ. Գ. Սևիակը իր «Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց» գրքի երկրորդ հրատարակության մեջ¹, տալով հայերենի խոնարհման համակարգի մամբանս նկարագրությունը, իր եզրակացություններն ամփոփում է մի մեծ

1. Գ. Մ. Բ. Ե. Ո. Ե. Վ. Ե. Լ., Փամասակահայկից հայոց լիեղզի դասընթաց, Երևան, 1955, էջ 317:

աղյուսակի ձևով: Այդ աղյուսակի համաձայն հայերենի բայը միայն հաստատական խոնարհման մեջ (չհաշված այսպես կոչված երկրորդական բաղադրյալ ժամանակները) ունի հիսունութ ժամանակ: Նկատենք, որ հեղինակի այսպնդումը հայերենի բայի ժամանակային ձևերի թվի մասին մնում է որոշ իմաստով չհիմնավորված, մանավանդ որ այդ հիսունութ ձևերը բերված են միայն աղյուսակի ձևով՝ առանց որևէ բացատրության ու վերլուծության: Տարակուսանքի տեղիք է տալիս նաև այն, որ տարբեր եղանակներին հատուկ միևնույն ժամանակային ձևերը (օրինակ՝ սահմանականի ապառնի ներկա, հրամայականի ապառնի ներկա, ըղձականի ապառնի ներկա և այլն) հեղինակի կողմից դիտվում են որպես տարբեր ժամանակային ձևեր (տարբեր ժամանակներ), որի հետևանքով էլ, ըստ էության ստացվում են հիսունութ ժամանակներ: Ոչինչ չի ասված նաև այն մասին, թե ինչով են միմյանցից տարբերվում հեղինակի կողմից առանձնացված ժամանակային ձևերը, մինչդեռ տվյալ աղյուսակում բերված ձևերը, մեր կարծիքով, անհրաժեշտ էր վերլուծության ենթարկել նրանց իմաստի տեսանկյունից, տալ այդ ձևերի տեսականորեն հիմնավորված դասակարգումը, ցույց տալ այդ ձևերից յուրաքանչյուրի մեջ հանդես եկող տարբեր քերականական կարգերի փոխհարաբերությունն ու փոխադարձ կապը: Այդ առավել ևս անհրաժեշտ էր անել՝ նկատի ունենալով, որ բայի հիսունութ ժամանակային ձևերի գոյության մասին կարծիքը հայ քերականագիտական գրականության մեջ առաջին անգամն է հայտնվում:

Բայի ժամանակային ձևերի հարցը այլ կերպ է փորձում լուծել Հ. Բարսեղյանը, որ նույնպես աշխատում է դուրս գալ ավանդական քերականության շրջանակներից և մի շարք բայական ձևերի մեջ տեսնել կերպի քերականական կարգ: «Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն»² ծավալուն մենագրության մեջ հեղինակը հաստատում է, որ հայերենում բայն ունի գործողության կատարման երեք ժամանակ՝ ներկա, անցյալ և ապառնի: Սակայն հետագա շարադրանքի և վերլուծության ընթացքում հեղինակի մոտ զդացվում է ժամանակի քերականական կարգի սահմանման որոշ երկվություն, որ, մեր կարծիքով, բխում է իր սեփական տեսակետը հարցի ավանդական ըմբռնման հետ հաշտեցնելու նրա ձգտումից: Այսպես՝ 115-րդ էջում նշված երեք, ինչպես ինքն է արտահայտվում, «բնութանուր ժամանակներն» առանձնացնելուց հետո հեղինակն անմիջապես վերապահում է անում. «Սակայն հայերենի բայը խոսքի մոմենտի և անցյալ ու ապառնի ժամանակակետերի համեմատությամբ իր ձևերի փոփոխությամբ ստեղծում է նաև այլ բնահամարություններ և օրինաչափություններ, որի հետևանքով էլ, բացի այս երեք բնահամար ժամանակից տարբեր ժամանակների համեմատությամբ հայերենում բայն ունենում է ուրիշ այլևայլ ժամանակներ (ներկայի վաղակատար, հարակատար, անցյալի վաղակատար, անցյալի անկատար, ապառնի, անցյալ կատարյալ և այլն)»³:

Տվյալ սահմանումից անհասկանալի է մնում, թե հեղինակը ինչպես է ըմբռնում ժամանակի քերականական կարգը, ո՞րն է այն քերականական հարաբերությունը, որ իր արտահայտությունն է գտնում ժամանակի քերականական կարգի մեջ: Նրա սահմանումից հետևում է, որ ժամանակի քերականական կարգը արտահայտում է ինչ-որ հարաբերություն խոսքի մոմենտի նկատ-

2 Հ. Խ. Բարսեղյան, Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն, Երևան, 1953:

3 Նույն տեղում, էջ 115 (բնղղծումը մերն է. — Հ. Ա.):

մամբ, այլ կերպ ասած՝ ժամանակն արտահայտում է գործողության հարարերությունը խոսելու մոմենտի հետ: Մյուս կողմից, ըստ Հ. Բարսեղյանի, տվյալ կարգի միջոցով արտահայտվում է ինչ-որ հարարերությունն անցյալ և ապառնի որոշակի ժամանակակետերի նկատմամբ: Պարզ չէ, թե ի՞նչ նկատի ունի հեղինակը «անցյալ և ապառնի ժամանակակետեր» անվան տակ և թե ի՞նչ հարարերության մեջ են գտնվում այդ ժամանակակետերը խոսելու մոմենտի նկատմամբ, քանի որ ժամանակակետի հասկացությունը կապվում է խոսքի մոմենտի հետ, մինչդեռ անցյալն ու ապառնին մեզ «կետի» ձևով չեն ներկայանում⁴:

Ժամանակի քերականական կարգի ըմբռնման այս երկվությունն է հենց որ հիմք է տալիս հեղինակին խոսելու «ժամանակի կատեգորիաների» մասին⁵: Ստացվում է, որ ժամանակը ոչ թե մեկ քերականական կատեգորիա է, այլ միացնում է իր մեջ մի շարք կատեգորիաներ, քանի որ այլ կերպ չի կարելի հասկանալ հեղինակի գործածած «ժամանակի կատեգորիաներ» արտահայտությունը:

Հետագա շարադրանքում Հ. Բարսեղյանն արդեն միանգամայն որոշակի կերպով ընդգծում է, որ ժամանակի կատեգորիան արտահայտում է ոչ թե գործողության հարարերությունը խոսքի մոմենտի նկատմամբ, այլ տվյալ գործողության հարարերությունը այլ գործողությունների հետ: Այսպիսով՝ ժամանակի կատեգորիան նրա կողմից իմաստավորվում է իրեն մի կատեգորիա, որն արտահայտում է գործողությունների միաժամանակություն, նախորդում կամ հաջորդում⁶: Այլ կերպ ասած՝ հեղինակը ժամանակի քերականական կատեգորիան նույնացնում է այն կատեգորիայի հետ, որն անգլերենում արտահայտվում է պերֆեկտով և որը պրոֆ. Ա. Ի. Սմիրնիցկու կողմից բնութագրվում է որպես «հաջորդականության կատեգորիա» (категория последовательности) կամ ժամանակային վերաբերության կատեգորիա (категория временной отнесенности)⁷: Հետևաբար, այստեղ շփոթվում և նույնացվում են այսպես կոչված բացարձակ և հարաբերական ժամանակները, կամ ավելի ճիշտ՝ ժամանակի և հաջորդականության կատեգորիաները:

Այս հարցի վրա մենք համեմատաբար հանգամանորեն կանգ կառնենք, որովհետև այս երկու ժամանակային պլանների շփոթումը, ինչպես կտեսնենք ստորև, հանգեցնում է այն բանին, որ հայերենի խոնարհման համակարգում մեզ հետաքրքրող բայաձևերի իմաստն ու տեղը մնում են չպարզված:

Չնայած ժամանակի կատեգորիայի սահմանման հարցում թույլ տված որոշ շփոթության, նշված աշխատության հեղինակը, այնուամենայնիվ, շարունակում է մնալ այն կարծիքին, որ հայերենում բայն ունի երեք ժամանակներ կա, անցյալ և ապառնի, և ոչ թե հիստոնով կամ իններ, ինչպես սովորաբար տրվում է դպրոցական նորմատիվ քերականության մեջ:

Այս կապակցությամբ միանգամայն բնականորեն և օրինաչափորեն հարց է առաջանում. ի՞նչ են ներկայացնում իրենցից այլ հեղինակների կողմից

⁴ Այս մասին տե՛ս А. И. Смирницкий, Морфология английского языка, М., 1959, էջ 328—341:

⁵ Հ. Խ. Բարսեղյան, նշվ. աշխ., էջ 133:

⁶ Նույն տեղում, էջ 137—139:

⁷ А. И. Смирницкий, Перфект и категория временной отнесенности, «Иностранные языки в школе», 1955, №№ 1, 2.

առանձնացվող հարակատարը, վաղակատարը և մյուս «ժամանակները»: Վերը նշված գրքի 152 էջում տրված բացատրության հիման վրա Հ. Բարսեղյանը մյուս բայական ձևերը դիտում է որպես կերպային ձևեր: Ամենից ավելի որոշակիորեն կերպային պլանով նրա կողմից մեկնարանվում են մասնավորապես վաղակատարը և հարակատարը:

Այսպիսով՝ քերականագիտական դրականության հետ ամենաթուղթիկ ծանոթությունն իսկ հիմք է տալիս եզրակացնելու, որ արդի դրական հայերենի բայի ժամանակային ձևերի թվի և կազմի հարցում միասնական կարծիք դուրսբերում չունի:

Հատկապես մեծ տարածություններ կան բայի երկու ձևերի՝ վաղակատարի և հարակատարի առանձնացման հարցում: Որոշ ուսումնասիրողներ դրանք մտցնում են խոնարհման համակարգի մեջ որպես բայի երկու տարրեր ժամանակային ձևեր (Մ. Արևիկյան, Գ. Սևվակ, Ա. Ղարիբյան), մյուսները (Ս. Պալասանյան) խոնարհման սխեմայի մեջ մտցնում են նրանցից միայն մեկը՝ փաստորեն նրանց չտարբերակելով և հարակատարը դիտելով որպես վաղակատարի երկրորդ ձև (ձևաբանական տարբերակ), վերջապես երրորդները, նրանց միջև ինչ-որ նուրբ տարբերություն տեսնելով, հարակատարը և վաղակատարը դիտում են որպես միևնույն ժամանակի երկու ձևերը՝ գտնելով, որ հարակատարը սլոտի հանել խոնարհման համակարգից (Ստ. Լիսիցյան): Այլ կերպ է մտնում հարցին, ինչպես տեսանք վերը, Հ. Բարսեղյանը, որը հարակատարն ու վաղակատարը դիտում է որպես կերպային ձևեր⁸:

Առաջին տեսակետը, որի համաձայն վաղակատարը և հարակատարը երկու տարրեր ժամանակների ձևեր են, առաջ է քաշվել հանդուցյալ ակադեմիկոս Մ. Արևիկյանի կողմից, որը այդ երկու ձևերի միջև եղած տարբերությունը սահմանել է հետևյալ կերպ. «Հարակատար ժամանակները ցույց են տալիս մի անցյալ եղելություն, որի հետևանքը իբրև սնայուն դուրսյուն հարատևում է մինչև մի անցյալի ժամանակակետ, մինչդեռ վաղակատար ժամանակները պարզապես հայտնում են ներկայի կամ անցյալի մի ժամանակակետի նկատմամբ կատարված եղելություն՝ առանց ուշ դարձնելու, թե զործողություն հետևանքն իբրև դրություն հարատևում է, թե ոչ»: Սրանցից ելնելով էլ Մ. Արևիկյանը երկու դերայնություն կազմված ձևերը մտցնում է խոնարհման համակարգի մեջ որպես երկու՝ հարակատար և վաղակատար ժամանակներ: Հետագայում նա այն կարծիքն է հայտնում, որ «վաղակատար ժամանակն» արտահայտում է ներկայի նկատմամբ վերցրած մի ավարտված զործողություն, որը մտածվում է իբրև խոսքի մոմենտից առաջ տեղի ունեցած, բայց որի ազդեցությունը կամ հետևանքը հարատևում է մինչև խոսքի մոմենտը⁹: Նույն տեղում հեղինակը տալիս է «հարակատար ժամանակի» սահմանումը: Այդ սահմանման համաձայն հարակատարը նույնպես արտահայտում է մի այնպիսի անցյալ զործողություն, որ իբրև մնայուն դուրսյուն հարատևում է մինչև խոսքի ներկան:

Այսպիսով՝ Մ. Արևիկյանի տված սահմանումներից հետևում է, որ ինչպես վաղակատարը, այնպես էլ հարակատարը արտահայտում են անցյալում կատարված զործողություն, որի հետևանքը, արդյունքը հարատևում է մինչև խո-

8 Հմմտ. նրա աշխատության 148 և 152 էջերի աղյուսակները:

9 Մ. Արևիկյան, Աշխարհարարի շարահյուսություն, 1912:

սելու մոմենտը նրանց միջև եղած միակ տարբերությունը, ըստ Մ. Արեղյանի բնորոշման, այն է, որ հարակատարի դեպքում այդ հետևանքը դիտվում է իբրև մնայուն դրույթուն:

Պրոֆ. Ի. Սևվակը, սահմանելով վաղակատար և հարակատար գերբայնների միջև եղած տարբերությունը, նույնպես հաստատում է, որ երկու գերբայներն էլ արտահայտում են կատարված, ավարտված գործողություն: Առաջին գերբայի մեջ, սակայն, բացակայում է հետևանքի՝ իբրև մնայուն, հարատևող արդյունքի մոմենտը, մինչդեռ երկրորդի մեջ ավարտված գործողությունը հանգեցնում է որոշակի արդյունքի: Այս կապակցությամբ նա գրում է. «Երբ ասում ենք «խմել (է)», այստեղ սոսկ ակնարկվում է խմելու գործողության ավարտված լինելը, բայց երբ ասում ենք «խմած (է)», այստեղ, բացի այդ իմաստից, կա նաև գործողության արդյունքի հարատևությունը, այսինքն՝ խմել (է), բայց մինչև հիմա էլ խմելու հետևանքը, ազդեցությունը՝ խմած լինելը հարատևում է»¹⁰:

Սրանից կարելի է եզրակացնել, որ վաղակատարի և հարակատարի միջև եղած տարբերությունը համապատասխանում է այն տարբերությանը, որ դրսևում ենք անգլերենում *he has drunk* խմել է (գործողությունը նախորդել է ինչ-որ մոմենտի, ավարտվել է անցյալում, նշվում է, որ այդպիսի գործողություն է տեղի ունեցել) և *he is drunk* խմած է (գործողության հետևանքով ստեղծվել է որոշակի վիճակ) արտահայտությունների միջև: Այլ կերպ ասած՝ երկրորդ դեպքում այդ հետևանքը՝ հարատևող արդյունքը, ըստ էության, հանդես է գալիս որպես առարկայի որոշակի որակ, հատկանիշ: Պետք է ասել, որ այդ շի ժխտում ինքը պրոֆ. Սևվակը: Նա գրում է. «Հարակատար գերբայը շնորհիվ իր այն հատկանիշի, որ ցույց է տալիս կատարված գործողության հարատևող արդյունքը կամ հետևանքը, հաճախ գործածվում է իբրև որոշիչ՝ այդ հետևանքը, վիճակը վերագրելով այս կամ այն առարկային, իբրև նրա հատկանիշ»¹¹:

Մեր կարծիքով, հարակատար գերբայի հիմնական քերականական իմաստը, ի տարբերություն վաղակատարի, հենց այս է. ոչ թե արդյունքի (результативность) առկայություն կամ բացակայություն (քանի որ արդյունքի գաղափարը ոչ սակավ դեպքերում հանդես է գալիս նաև վաղակատարի մեջ, որ նշում է Մ. Արեղյանը, ինչպես նաև Ստ. Լիսիցյանը)¹², այլ վիճակը՝ որպես առարկայի հատկանիշ, որ որոշակի գործողության կատարման արդյունքն է: Եվ վաղակատարի ու հարակատարի ինչ լինելու հարցը լուծելիս անհրաժեշտ է ելնել հարակատար գերբայի հենց այս հիմնական իմաստից:

Սակայն վերն ասածը արդյո՞ք հիմք է տալիս հարակատար գերբայով և «լինել» (—եմ) բայով կազմված բառակապակցությունները դիտելու որպես վաղակատարի երկրորդ՝ դուրսահեռ ձև, և արդյո՞ք այս է պատճառը, որ հարակատարը պիտի դուրս բերել հայերենի բայի խոնարհման համակարգից, ինչպես այդ անգամ է Ստ. Լիսիցյանը:

¹⁰ Գ ո ռ զ յ ե ն Ս Ս Վ ա կ , նշվ. աշխ., էջ 298:

¹¹ Նույն տեղում (ընդգծումը մերն է.— Ա.):

¹² Ստ. Լիսիցյան, Ժամանակակից հայերեն լեզվի խոնարհումը, ՊԶԳԱ, հատ. XIX, 1941:

Այս հարցին մենք տալիս ենք բացասական պատասխան: Այնուամենայնիվ, Սո. Լիսիցյանի մոտ այստեղ քննարկվող ձևերի վերաբերյալ հանդիպում ենք հետաքրքրական մտքերի, որոնք մի ավելորդ անգամ բերում են մեզ այն համոզման, որ այսպես կոչված հարակատար, իսկապես, հալերենի բայի խոնարհման համակարգի (—պարադիգմա) մեջ մտնող վերլուծական ձև չկ:

Սո. Լիսիցյանի կարծիքով վաղակատարի և հարակատարի միջև էական իմաստային տարբերություն գոյություն չունի, րստ որում հիմնական ձև նա համարում է վաղակատարը, այդ պատճառով էլ հարակատարը նա դուրս է բերում խոնարհման սխեմայից: Չհամաձայնելով նրա հետ՝ Հ. Բարսեղյանը, իրավացիորեն նշում է, որ հարակատարի և վաղակատարի միջև գոյություն ունի որոշակի իմաստային տարբերություն, որի շնորհիվ էլ հենց լեզվում երկու ձևերն էլ պահպանվում են: Ճիշտ է նաև Հ. Բարսեղյանի այն դիտողությունը, թե միշտ չէ, որ վաղակատարն ունի գործողության հարատևող կամ հարատևած արդյունքի իմաստ, որ եթե հույվել է, նստել է, կանգնել է, հոգնել է, և այլն կարող են նշանակել հույված է, նստած է, կանգնած է, հոգնած է, ապա այդ ամեններն էլ չի նշանակում, թե առաջին ձևերը միշտ կարող են փոխարինվել երկրորդ ձևերով¹³:

Անհրաժեշտ է նշել, որ նման վիճակ մենք ունենք նաև անգլերենի բայի պերֆեկտային ձևերի դեպքում, ուր համապատասխան ձևերը կարող են նշել կամ չնշել գործողության արդյունքի կապը ներկայի հետ (այսպես կոչված ինկլյուզիվ և էքսկլյուզիվ պերֆեկտ): Հետևաբար այս երկու մոմենտը (արգյունքի—ռեզուլտատիվության առկայությունն ու բացակայությունը) կարող են հանդես գալ միևնույն բայական ձևի մեջ, մի բան, որ կախված է իրեն բայի իմաստից (այսպես կոչված սահմանային և ոչ-սահմանային բայեր), ինչպես նաև կոնտեքստից: Սակայն այն փաստը, որ ինկլյուզիվությունը (—ռեզուլտատիվությունը) հայերենում հանդես է գալիս ոչ միայն հարակատարի, այլև վաղակատարի ձևերի մեջ, ինքնրստիքյան խոստով է այն մասին, որ այդ ձևերի միջև եղած հիմնական տարբերությունը դրանում չէ:

Ինչո՞ւմն է այդ դեպքում տարբերությունը, ո՞րն է հարակատար դերբայի հետևաբար և այդ դերբայով ու «լինել» բայով կազմված կապակցությունների իմաստը:

«Լինել» բայով և վաղակատար ու հարակատար դերբայներով կազմված բառակապակցությունների սահմանադատման հարցն անհրաժեշտ է ուսումնասիրել՝ կապված, մի կողմից, վերլուծական ձևերի և ազատ (շարահյուսական) կապակցությունների սահմանադատման, մյուս կողմից՝ մեկ ու մյուս դերբայով կազմված ստորոգյալի կառուցվածքային-իմաստային տիպերի սահմանադատման հարցերի հետ:

Ընդունելով վաղակատար և հարակատար դերբայներով և «լինել» բայով կազմված կապակցությունները որպես բայի ժամանակային ձևեր՝ հայագետները դրանով իսկ հաստատում են, որ թե՛ մեկ և թե՛ մյուս դեպքում գործ ունենք վերլուծական ձևերի հետ: Իսկ վերլուծական ձևերը, ինչպես հայտնի է, «...աջնալիսի գոյացումներ են, որոնք, մի կողմից, ունեն բառակապակցությանը նման կառուցվածք, իսկ մյուս կողմից, էսպես տարբերվում են բառա-

13 Տե՛ս Հ. Խ. Բարսեղյան, նշվ. աշխ., էջ 154:

կապակցություններից և նմանվում են ամբողջական բառերի»¹⁴։ Այսպիսով՝ վերլուծական ձևեր որևէ հիմնական բառի (ներառողականի ձևով) յուրահատուկ կապակցությունն է որողականի սպասարկու բառի հետ։

Այս առնչությամբ մեծ հետաքրքրություն է ներկայացնում վերլուծական ձևեր կազմող բաղադրիչների փոխհարաբերության հարցը։

Վերլուծական ձևում որպես բաղադրիչ հանդես եկող բառերի բնորոշ առանձնահատկությունը կայանում է նրանում, որ բաղադրիչներից մեկը կորցրնում է (եթե ոչ լրիվ, ապա գոնե զգալի կերպով) լեքսիկական իմաստը, իսկ մյուսը՝ որող քերականական իմաստները։ Այսպիսով՝ սպասարկու բառը վերլուծական ձևի կազմի մեջ հանդիսանում է տվյալ ձևի քերականական իմաստների կրողը (համապատասխան քերականական կատեգորիաների ցուցիչը) այն ժամանակ, երբ նրա լեքսիկական իմաստն արտահայտվում է հիմնական բառի մեջ։ Այսպիսի վերլուծական ձևի իդեալական դեպք է, օրինակ, պերֆեկտի ձևեր անգլերենում։

Ինչպիսի՞ն է քերականական և լեքսիկական իմաստների փոխհարաբերությունը հայերենի մեզ հետաքրքրող ձևերի մեջ։ Անհրաժեշտ է նշել, որ հայերենի բայի խոնարհման համակարգի մեջ մտնող այդ բայաձևերում վերը նշված փոխհարաբերությունը բավականին բարդ է։ Այն հարցը, թե արդյոք ո՞ր բառով է արտահայտվում ժամանակի քերականական իմաստը՝ սպասարկու (օժանդակ) բայով, թե՞ հիմնական բառով (ղերբայով), տարբեր հեղինակների կողմից տարբեր լուծում է ստանում։ Այսպես, Մ. Արեղյանը այն կարծիքն է հայտնել, որ ժամանակն արտահայտվում է օժանդակ բայով, մինչդեռ դերբայի մեջ արտահայտվում է միայն կերպը։ Արան միանգամայն հակառակ կարծիք է հայտնում Ա. Ղարիբյանը, ըստ որի օժանդակ բայով արտահայտվում են միայն դեմքը և թիվը, մինչդեռ հիմնական բովանդակությունը (==լեքսիկական իմաստը) և ժամանակն արտահայտվում են դերբայի միջոցով։ «Հայոց լեզվի մեթոդիկա» դրքում Ա. Ղարիբյանն այս առիթով գրում է. «Գիտենք, որ օժանդակ բայը ցույց է տալիս դեմքը և թիվը։ Ընդունված է ասել, որ օժանդակ բայը ցույց է տալիս նաև ժամանակը, սակայն այդ ճիշտ չէ, որովհետև օժանդակ բայը ցույց է տալիս ոչ թե գործողության ժամանակը, այլ կամ խոսողի ներկան, կամ խոսողի ենթադրած մի անցյալ ժամանակը, որի համեմատությամբ կատարվել է, կատարվում է և կատարվելու է գործողություն»¹⁵։

Գ. Սևվակը գտնում է, որ դերբայի մեջ արտահայտվում է գործողության ընթացքը, վիճակը, բայց ոչ նրա կատարման ժամանակը։ Ժամանակի գաղափարն արտահայտվում է օժանդակ բայով, ըստ որում օժանդակ բայով նշվում է այն ժամանակը, որի համեմատությամբ վերցվում են դերբայով արտահայտված գործողության տարբեր վիճակները։ Ըստ էության Գ. Սևվակի տեսակետը շատ մոտ է Մ. Արեղյանի տեսակետին, եթե նկատի ունենանք, որ գործողության տարբեր վիճակները, նրա ընթացքի տարբեր բնույթը բնորոշվում է որպես կերպ։

¹⁴ А. И. Смирницкий, Морфология английского языка, т. 64: նույնի՝ Аналитические формы, «Вопросы языкознания», 1956, № 2.

¹⁵ Ա. Ղարիբյան, Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան, 1947, էջ 283:

Համապատասխան բայաձևերի մանրամասն վերլուծություն ենք դրնում՝ Հ. Բարսեղյանի մոտ, որը, զուգադրելով մի կողմից՝ գնում է, գնացել է, գնալու է, իսկ մյուս կողմից՝ գնալու եմ, գնալու էի, գնալու կլինեմ ձևերը, գալիս է այն եզրակացության, որ ո՛չ գերրայը, ո՛չ էլ օժանդակ բայը առանձին վերցրած չեն նշում գործողության կատարման ժամանակը, որ ժամանակն արտահայտվում է վերլուծական ձևի երկու բաղադրիչներով՝ միասին վերցրած¹⁶։ Այսպիսով, բացի ներկայից (նստում եմ) և ապառնուց (նստելու եմ), մնացած բոլոր բայաձևերը (ընդամենը 7) Հեղինակի կողմից դասվում են անցյալի ձևերի շարքը։ Որոշ իմաստով անհասկանալի է մնում, թե ինչո՞ւմ է նստած եմ, և նստած էի, նստել եմ, և նստել էի ձևերի տարբերությունը, եթե նրանք բոլորն էլ հավասարապես անցյալի ձևեր են։ Հեղինակի մոտեցումը տվյալ հարցին բավական հակասական է։ Այդ մասին է վկայում և այն փաստը, որ 148 էջում բերված աղյուսակում նստել եմ (էի), նստած եմ (էի) ձևերը տրված են անցյալի տակ, իսկ 152 էջում, հուզվել եմ, հուզված եմ, ձևերը դիտվում են որպես ներկայի ձևեր, մինչդեռ հուզվել էի, հուզված էի ձևերը համարվում են անցյալի ձևեր։ Այսպիսով՝ այստեղ նկատվում է վերադարձ դեպի հարցի ավանդական ըմբռնումը, որի համաձայն ժամանակը որոշվում է օժանդակ բայով։

Վերլուծական ձևերի և ազատ (շարահյուսական) կապակցությունների սահմանափակումն տեսակետից առանձին հետաքրքրություն է ներկայացնում տարբեր գերրայների կապակցելիության հարցը այն բայերի հետ, որոնք հանդես են գալիս որպես սպասարկու բառեր, ինչպես նաև տարբեր շարահյուսական ֆունկցիաներում գերրայների ինքնուրույն գործածության հարցը։ Այս տեսակետից հայերենում չափազանց հետաքրքրական պատկեր ունենք։ Պարզվում է, որ հայերենի ոչ բոլոր գերբայներն են մասնակցում բայի եղանակային (վերլուծական) ձևերի կազմությանը։ Որոշ գերբայներ կապակցության մեջ չեն մտնում լինել բայի ձևերի հետ, կամ, համենայն դեպս, հանդես չեն գալիս որպես վերլուծական ձևի բաղադրիչ (անորոշ, ենթակայական), մինչդեռ այլ գերբայներ (անկատար, վաղակատար, ժխտման), որպես կանոն, ինքնուրույն գործածություն չունեն և հանդես են գալիս միայն իրեն բայի վերլուծական (եղանակային) ձևի բաղադրիչ¹⁷։ Այս տեսակետից որոշ բացառություն կազմում է (եթե կանգնելու լինենք հայերենի բայաձևերի կազմի ավանդական տեսակետի վրա) հաբակատար գերբայը (մասամբ և ապառնի գերբայը), որը, թերևս, ավելի հաճախ հանդես է գալիս ինքնուրույն շարահյուսական պաշտոնով (որոշիչ, պարագա), քան որպես լինել բայով կազմված կապակցության բաղադրիչ։

Այստեղ երևան է գալիս հարակատար գերբայի ևս մի յուրահատուկ առանձնահատկությունը, որով նա տարբերվում է մասնավորապես վաղակատար գերբայից։ Խոսքը վերաբերում է սպասարկու բայի ընտրությունը, տարբեր գերբայների՝ այս կամ այն սպասարկու բայի հետ կապակցվելու հնարավորությունը։ Եթե վաղակատար գերբայը (ինչպես և վերլուծական ձևեր կապ-

16 Հ. Բարսեղյան, նշվ. աշխ., էջ 146։

17 Նկատի ունենք այդ գերբայների կապակցությունը լինել բայի հետ. հայտնի է, որ անկատար գերբայի երկրորդ ձևը, ինչպես նաև վաղակատար գերբայը կարող են առանձին գործածվել գերբայական դարձվածքում (հմտ. Տուն զեալիս հանդիպեցի նրան, նստել խոսում էին)։

մող մյուս ղերբայները) բացառապես կապակցվում են եւմ բայի հետ՝ որպես օժանդակ բայի, ապա հարակատարը բառակապակցության մեջ է մտնում ոչ միայն եւմ բայի (ինչպես նաեւ լինել բայի՝ հմմտ. նստած լինել, հոգնած լինել և այլն), այլև ունենալ և կամ բայերի հետ¹⁸:

Մեր կարծիքով, տվյալ փաստը ինքնին խոսում է այն մասին, որ հարակատար ղերբայով կազմված կապակցությունները բայի խոնարհման համակարգի մեջ չեն մտնում, վերլուծական ձևեր չեն հանդիսանում, որովհետև վերլուծական ձևի բաղադրիչները չեն կարող այլ բաղադրիչներով փոխարինվել: Վերլուծական ձևը տարբերվում է ազատ (շարահյուսական) բառակապակցությունից հենց իր առանձնակիությամբ, որոշ մեկուսացումով¹⁹: Եթե, օրինակ, անգլերենում պերֆեկտը կազմվում է have օժանդակ բայի և 2-րդ ղերբայի (Past Participle) օգնությամբ, ապա այստեղ have բայը չի կարող փոխարինվել այլ օժանդակ բայով: Նույնը վերաբերում է և մյուս վերլուծական ձևերին: Եվ, պիտի ասել, անհասկանալի է մնում, թե ինչ չափանիշով է առաջնորդվում Ա. Արրահամյանը՝ պնդելով, որ հարակատար ղերբայ + եւմ կապակցությունն ավելի սերտ կապ է ներկայացնում, քան հարակատար ղերբայ + լինել (ունենալ, կամ) կապակցությունը: Այս առնչությամբ ուշագրավ է Դ. Սևակի մի դիտողությունը: Շուշափելով հարակատար ղերբայի մեջ սեռերի տարբերական հարցը՝ նա (և ոչ միայն նա) նշում է, որ այս ղերբայը կարող է ունենալ ինչպես ներդրածական, այնպես էլ կրավորական սեռի իմաստ, ըստ որում կրավորականի իմաստը հաճախ արտահայտվում է առանց «վ» միջամասնիկի՝ ձևերով (հմմտ. նամակ գրած մարդը = այն մարդը, որ նամակ է գրել և մարդու գրած նամակը = այն նամակը, որ գրվել է մարդու կողմից): Խոսակցական լեզվում, սակայն, այս ղերբայով և սպասարկու բայերով կազմված կապակցությունների մեջ սեռերի տարբերակումն իրականացվում է երկու տարբեր բայերի (ունենալ և լինել) գործածությամբ²⁰, մի բան, որ հիշեցնում է անգլերենի համար բնորոշ պատկերը. հմմտ. գրած ունի = գրել է has written և գրած է = գրվել է = is written (has been written), կերած ունի = կերել է = has eaten և կերած է = կերվել է = is eaten (has been eaten):

Այստեղ, մեր կարծիքով, ղերբայի ինքնուրույն ղերը ավելի որոշակիորեն է հանդես գալիս. ղերբայը մի տեսակ ետ է մղվում, առանձնանում է սպասարկու բայից և հանդես է գալիս որպես նախադասության ինքնուրույն անդամ: Այդ մասին է վկայում այն փաստը, որ ունենալ բայով կազմված կապակցություններում ղերբայը շարահյուսական կապի մեջ է մտնում խնդրի և ոչ թե ենթակայի հետ: Այս դեպքում մենք ունենում ենք մի կազմություն, որ իր ներքին կառուցվածքով համընկնում է հին անգլերենի he hæfde hinne zebundenne «նա նրան կապած ունի» և ժամ. անգլերենի I have my exercises written «վարժություններս գրած ունեմ» (այսինքն՝ ունեմ գրված վիճակում, թեև ես չեմ գրել) արտահայտություններին: Այլ կերպ ասած՝ այստեղ ղերբայը

18 Այս մասին տե՛ս Ա. Ա. Արրահամյան, Հայերենի ղերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը, Երևան, 1953, էջ 387, ըստ որում, ինչպես նշում է տվյալ աշխատության հեղինակը, այս դեպքում կապը ղերբայի և սպասարկու բայի միջև ավելի թույլ է, քան հետևանքով էլ հարակատար ղերբայով և ունենալ ու կամ բայերով կազմված կապակցություններն ցնդումված չլ բայի և դանակային ձևեր համարել:

19 Տե՛ս А. И. Смирницкий, Морфология английского языка, էջ 78—82:

20 Տե՛ս Գ ո ռ ղ ե ն Ս ե վ ա կ, Նշվ. աշխ., էջ 299:

հանդես է գալիս այսպես կոչված օբյեկտային ստորոգելիական վերադրի (objective predicative) սլաշտոնով: Դա խոսում է այն մասին, որ ղերբայի, և մասնավորապես հարակատար ղերբայի համար բացառված չէ ստորոգելիական վերադրի ֆունկցիան, ինչպես պնդում են, առանց բացառության, բոլոր ուսումնասիրողները:

Սակայն մեկ կարող են առարկել, որ եթե այդ ճիշտ է ունենալ բայով կազմված կապակցությունների համար, ապա եմ բայով կազմված կապակցությունների վերաբերյալ նույնը չի կարելի պնդել: Այդ հարցին պատասխանել կարելի է միայն ստորոգյալի կառուցվածքային-իմաստային տիպերի վերլուծության միջոցով:

Ըստ բովանդակության, Ա. Ի. Սմիրնիցկին ստորոգյալի շտրս հիմնական տիպ է առանձնացնում. պրոցեսային, որակողական կամ որոշիչային (КВАЛИФИКАТИВНОЕ сказуемое), օբյեկտային և պարագայական²¹: Պրոցեսային ստորոգյալի ժամանակ պրեդիկատը կամ մտքի առարկան, որի հետ կապվում է ստորոգումը, հանդիսանում է պրոցեսը, միանշանակ որակողական ստորոգյալի ղեկավարում առանձնացվում է առարկայի որոշակի հատկանիշը, տեղի է ունենում սուբյեկտի որակավորում²²:

Սրանցից ո՞ր տիպին է պատկանում այսպես կոչված հարակատարով արտահայտված ստորոգյալը:

Ինչպես տեսանք, հարակատար ղերբայի իմաստը սահմանվում է որպես որակի, հատկանիշի իմաստ, որն արդյունք է որոշակի գործողության: Այդ շատ պարզ ու հստակ սահմանված է Հ. Բարսեղյանի²³ և Ա. Արրահամյանի²⁴ մոտ: Տվյալ հեղինակների առաջարկած սահմանումների համաձայն հարակատար ղերբայով և եմ բայով կազմված կապակցությունները նշում են առարկայի (= ենթակայի) վիճակը, ենթակային ստորոգվում է վիճակ, տեսական կամ ժամանակավոր հատկանիշ և ոչ թե պրոցես: Այդ կերպ ասած, հարակատար ղերբայով և եմ կառուցվածքը շարահյուսական տեսանկյունից՝ իր բովանդակությամբ որակողական ստորոգյալ է և ոչ թե պրոցեսային ստորոգյալ: Իսկ որակողական ստորոգյալն իր կառուցվածքով բաղադրյալ ստորոգյալ է, որն իրենից ներկայացնում է բառակապակցություն և ոչ թե բառի վերլուծական ձև: Սմ սպասարկու բառն այս կապակցությունների մեջ հանդես է գալիս հանգույցի ղերբում, իսկ ղերբայը՝ ստորոգելիական վերադրի: Նման պատկեր ունենք նաև անգլերենում, այստեղ be + 2-րդ ղերբայ կառուցվածքը, բացի կրավորական սեռի վերլուծական ձևը լինելուց, կարող է հանդես գալ և որպես բաղադրյալ ստորոգյալ՝ որակողական բովանդակությամբ, արտահայտելով վիճակ՝ որպես կատարված գործողության արդյունք: Հմմտ. The chair is broken, don't sit on it. The children were neatly dressed. The number of copies is limited²⁵.

Ի վերջո, ուղադրության արժանի է նաև մի շատ կարևոր ձևաբանական-շարահյուսական մոմենտ, որ բնորոշ է տվյալ կապակցություններին՝ ի տարբերություն վերլուծական բայաձևերի: Դա ժխտման արտահայտումն է մեկ և

²¹ См. А. И. Смирницкий, Синтаксис английского языка, М., 1957, гл. 112—113.

²² Նույն տեղում:

²³ См. А. А. Барсегян, նշվ. աշխ., гл. 154—155.

²⁴ См. А. А. Арраханян, նշվ. աշխ., гл. 193.

²⁵ Օրինակները վերցված են M. Ganshina and N. Vasilevskaya, English Grammar, М., 1953 գրքից:

մյուս դեպքում: Ինչպես հայտնի է, հայերենում ժխտումն արտահայտվում է ձևաբանորեն՝ ժխտական նախամասնիկի ավելացմամբ (հմմտ. գրել—չգրել), որ բայի հետ մի ամբողջություն է կազմում: Համապատասխան ձևերը մտնում են բայի ժխտական խոնարհման համակարգի մեջ, ինչպես և անգլերենում: Այսպիսով՝ ժխտման կատեգորիան ինչպես հայերենում, այնպես էլ անգլերենում ձևաբանական կատեգորիա է: Օժանդակ եմ բայով և գերբայով կազմված բաղադրյալ բայական ձևերի մեջ ժխտական նախամասնիկը ավելանում է եմ բայի վրա, ըստ որում միաժամանակ տեղի է ունենում շարադասության փոփոխություն: Եթե ոչ-հուզական խոսքի մեջ հաստատական ձևում բնորոշ է գերբայ+օժանդակ բայ շարադասությունը, ապա ժխտական ձևում օժանդակ բայը, որպես կանոն, գրվում է գերբայից առաջ (հմմտ. գրում եմ—չեմ գրում, կարդացել եմ—չեմ կարդացել, գնալու եմ—չեմ գնալու և այլն): Մյուս կողմից, չափազանց բնորոշ է սպասարկու բայի՝ եմ հանգույցի տեղի պահպանումը և՛ հաստատականում, և՛ ժխտականում բաղադրյալ անվանական ստորոգյալի մեջ (հմմտ. նա աշակերտ է—նա աշակերտ չէ. մատիտը կարմիր է—մատիտը կարմիր չէ): Այս տեսակետից եմ բայի կապակցությունները հարակատար գերբայի հետ՝ ժխտականում եմ բայի տեղի իմաստով ցուցաբերում են նույն առանձնահատկությունը, ինչ որ հանգույցով կազմված բաղադրյալ ստորոգյալ հանդիսացող կապակցությունները (հմմտ. խմած եմ—խմած չեմ, նստած եմ—նստած չեմ, հոգնած եմ—հոգնած չեմ, հուզված եմ—հուզված չեմ և այլն):

Այսպիսով, հարակատար գերբայով կազմված ժխտական կապակցության շարահյուսական առանձնահատկությունները ևս նրան դասում են այն կապակցությունների շարքը, որոնք ազատ բառակապակցություններ են և կազմում են որակողական ստորոգյալ՝ ի հակադրություն պրոցեսային ստորոգյալի, որն արտահայտվում է բայի վերլուծական ձևերով:

Այսպիսով, եմ բայով և վաղակատար ու հարակատար գերբայներով կազմված կապակցությունները տարբեր տիպի բառակապակցություններ են, որոնք ստորոգյալի կառուցվածքային և իմաստային տարբեր տիպեր են ներկայացնում: Վաղակատար գերբայով կազմված կապակցությունները բայի վերլուծական ձևեր են և հանդես են գալիս որպես անգլերենի պերֆեկտի տիպի պարզ բայական ստորոգյալ՝ պրոցեսային իմաստով: Երկրորդ տիպի կապակցությունները (հարակատար գերբայ + եմ) ազատ բառակապակցություններ են, որոնք կազմում են բաղադրյալ անվանական ստորոգյալ՝ որակողական իմաստով, ինչպես անգլերենի *he is drunk, the chair is broken* բառակապակցությունը, որտեղ ստորոգելիական վերադրի գերում հանդես է գալիս գերբայը: Ուստի պատահական չէ, որ անգլերենի վիճակ արտահայտող կրավորական կառուցվածքը (=բաղադրյալ անվանական ստորոգյալ) կանոնավորապես թարգմանվում է հայերենի հարակատար գերբայ+եմ բառակապակցությամբ:

Վերը շարադրվածը հիմք է տալիս մեզ պնդելու, որ հարակատար գերբայով կազմված կապակցությունները՝ այսպես կոչված «հարակատար ժամանակները» պիտի դուրս բերվեն հայերենի խոնարհման համակարգից:

К ВОПРОСУ О СИСТЕМЕ ФОРМ СПРЯЖЕНИЯ АРМЯНСКОГО ГЛАГОЛА

А. А. АСМАНГУЛЯН

(Р е з ю м е)

К числу вопросов грамматического строя армянского языка, требующих уточнения, относится вопрос о системе форм спряжения армянского глагола, в частности о количестве и составе временных форм глагола в современном армянском литературном языке. Количество временных форм глагола, выделяемых разными исследователями-арменистами, колеблется от 3 до 58 (см., например, Гурген Севак, Курс современного армянского языка, Ереван, 1955). При этом одни исследователи дифференцируют соответствующие глагольные формы во временном плане, другие усматривают здесь категорию вида (*վաղակալար, հարակալար, անկալար, կալարի*).

Большие разногласия имеются, в частности, при решении вопроса о выделении в армянском языке двух форм глагола, именуемых в армянской грамматике *վաղակալար* и *հարակալար*. Одни исследователи включают их в систему спряжения в качестве двух разных временных форм глагола, другие в схему спряжения включают только одну из них и, наконец, третьи, усматривая между ними некоторое тонкое семантическое различие, рассматривают их как две формы (морфологические варианты?) одного и того же времени.

Вопрос о разграничении исследуемых форм (сочетания глагола «быть» с причастиями *վաղակալար* и *հարակալար*) необходимо рассматривать в плане разграничения аналитических форм и свободных (синтаксических) сочетаний, с одной стороны, и в плане разграничения структурно-семантических типов сказуемого — с другой.

Исследование фактов армянского языка, а также сопоставительное изучение фактов английского и армянского языков приводят нас к выводу, что сочетания глагола «быть» с упомянутыми выше причастиями армянского языка (*վաղակալար* и *հարակալար*) — сочетания разного типа, образующие разные структурно-семантические типы сказуемого. Первые из них представляют собой аналитическую форму глагола и выступают в качестве простого глагольного сказуемого с процессуальным значением типа английского перфекта. Вторые же сочетания являются свободными сочетаниями глагола «быть» с причастием, образующими составное именное сказуемое с квалификативным содержанием типа английской конструкции «be» + 2-е причастие (ср. *he is drunk, the chair is broken*). Поэтому не случайно, что английская пассивная конструкция со значением состояния (составное квалификативное сказуемое) передается на армянский язык сочетанием глагола «быть» и «*հարակալար*».